«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-688-23.10.2023-ՊԱ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվում է նոր խմբագրությամբ շարադրել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 129^2-րդ հոդվածի խրախուսող նորմը՝ ազատելով իրավախախտումը վերացրած քաղաքացիներին խրախուսող նորմի կիրառման համար 24 ժամվա ընթացքում լիազորված մարմին (պաշտոնատար անձին) իրավախախտման հատկանիշները վերացրած լինելու ապացույցը ներկայացնելու պարտավորությունից:

Վերոնշյալ նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացնում է հետևյալ դիտարկումները.

1. Նախագծով առաջարկվող կարգավորումը, ըստ էության, իրագործելի է, եթե ծրագրատեխնիկական համակարգը հնարավորություն տա, որպեսզի քաղաքացիների կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129^2-րդ հոդվածի 2-րդ մասով վարչական պատասխանատվության ենթարկված անձի կողմից 24 ժամվա ընթացքում իրավախախտման հատկանիշները վերացվելու մասին տեղեկատվությունը, այսինքն՝ կնքված պայմանագիրը, սահմանված ժամկետում արտացոլվի էլեկտրոնային հարթակում:

Նախագծի ընդունման պարագայում անհրաժեշտություն է առաջանալու Պարեկային ծառայության կողմից օգտագործվող էլեկտրոնային ծրագիրը փոխկապակցելու aswa.am կայքին, որպեսզի ինքնաբերաբար գործի խրախուսող նորմը (կամ գործող պայմանագիր ունենալու հանգամանքն ինքնաբերաբար արտացոլվի): Այս համատեքստում ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից առաջիկայում նախատեսվում է ձեռնարկել միջոցներ՝ համապատասխան ծրագրատեխնիկական լուծումներ գտնելու համար:

2. Նախագծի հիմնավորումն ունի լրամշակման կարիք: Հիմնավորման համաձայն՝ նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ անձը խախտումը վերացնելու և տուգանքի 25 տոկոսը վճարելու, բայց 24 ժամվա ընթացքում դրա ապացույցը չներկայացնելու դեպքում «ենթարկվում է հավելյալ վարչական պատասխանատվության»: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129[2]-րդ հոդվածի 2-րդ մասով վարչական տույժ է նախատեսված քաղաքացու՝ ՀՀ օրենքով նախատեսված պարտավորությունը չկատարելու համար: Հետևաբար, խրախուսող նորմով պարտականություն է դրվել իրավասու մարմին ներկայացնելու գործող պայմանագիր: Քաղաքացու կողմից հիմնական պարտականությունը չկատարելն է առաջացնում գործող պայմանագիր ներկայացնելու պարտականություն, որպեսզի կիրառվի խրախուսող նորմը:

Գործող իրավակարգավորումն անձի համար կրկնակի պատասխանատվություն չի առաջացնում: Խրախուսող նորմի չկիրառվելու դեպքում անձը պետք է վճարի տուգանքի գումարի ոչ թե 125, այլ՝ 100 տոկոսը: Հաշվի առնելով, որ հիմնավորման մեջ ներառված նման մոտեցումը կարող է հանրության շրջանում թյուրըմբռնումների տեղիք տալ (առավել ևս, որ իրավական առումով հիմնավորված չէ), առաջարկվում է նախագծի հիմնավորումից հանել վերոհիշյալ հատվածը:

3. Նախագծում պահպանված չեն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ, 18-րդ և 23-րդ հոդվածների պահանջները: